

ԱՆՆԱ ԱՐԱՋՅԱԼ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍԱՅՈՒ

Հայոց բառարանագրության կոթողային նվաճումներից է Մխիթար Սեբաստացու «Հայկազեան լեզուի բառգիրքը» /հհ. Ա և Բ, 1749, 1769/, որ բովանդակում է շուրջ 100000 բառ: Սա մինչ այդ հրատարակված ամենահարուստ ու ճոխ բառարանն էր և դարձավ հետազայում կազմված բոլոր բառարանների առաջին և կարևորագույն սկզբնաղբյուրը:

Սեբաստացու գրչին է պատկանում «Դուռն քերականութեան Աշխարհաբար լեզուիմ հայոց» աշխատությունը՝ թուրքերեն և հայերեն լեզուներով: Առաջին մասը, որ գրված է թուրքերեն, հրատարակվել է 1727 թ. Վենետիկում, երկրորդը՝ հայերեն գրված մասը, ցարդ մնում է անտիպ:

Սա գրական աշխարհաբարի արևմտահայ տարբերակի առաջին քերականությունն է: Հայտնի է, որ Ծրյողերի քերականությունը վերաբերում էր արևելահայ տարբերակին:

1730 թ. Սեբաստացին Վենետիկում տպագրում է գրաբարի քերականությունը՝ «Ջերականութիւն գրաբարի լեզուի Հայկազան սեռի», որի երկրորդ՝ ետմահու հրատարակության մեջ խորագրի «Հայկազան սեռի» արտահայտությունը փոխվել էր «Հայկազեան սեռի» /1770/:

Այս աշխատության առաջաբանում մա ընդգծում է իր նպատակադրումը՝ գրելու *այնպիսի քերականություն*, որ զերծ լինի ազդեցություններից և հիմնված լինի զուտ դասական շրջանի ձեռագիր մատյանների մյուսի վրա: Այս ցանկությունը, ավա՛ղ, մնաց անկատար: Նա ևս մեծապես տուրք տվեց լատինաբան դպրոցի սկզբունքներին:

Մ. Չամչյանն անդրադարձել է այս հարցին և ցավով գրել, որ Սեբաստացին «կամեցաւ շարադրել զնոր իմն քերականութիւն և նովին վերածել յառաջին ուղղութիւն գրաբար լեզուս Հայոց: Բայց քանզի յայնմ ժամանակի նորոգ հանդիսացեալ էին բազում քերականութիւնք բազում հեղինակաց, որք բազում ինչ նոր և օտար խառնեալ էին ի լեզու մեր, և *ո՛չ էր հնար հակառակ նոցին աւանդել կանոնս ըստ բուն մախնի ուղղախօսութեան*: Նմին իրի ջանացաւ Հայրն մեր այնպէս կարգել զքերականութիւն իւր, զի մի՛ ներհակ երևեսցի նոր հեղինակաց: /.../ Այլ սակայն եթէ զոր գիտէր՝ յայտնապէս գրէր, և զամենայն կանոնս իւր ըստ այնմ կարգէր, թշնամի յարուցանէր գրութեան իւրում զբազումս ի նորոց, որով ո՛չ ժամանէր այնմ, զոր գիտէր»¹:

Եվ, իսկապէս, այդ շրջանում հրապարակի վրա արդեն կային մի շարք հայագգի և օտարագգի հեղինակների՝ հիմնականում լատինաբան ուղղվածություն ունեցող քերականություններ /Ֆր. Ռիվոլա, Կ. Գալանոս, Ոսկան Երևանցի, Հովհ. Կոստանդնուպոլսեցի Հովով, Ս. Ջուլայեցի, Խ. Էրզրումեցի, Ծրյողեր և այլք/, որոնցից շատերը դեռ ապրում,

¹ Մ. Չամչյան, Ջերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1979, էջ 3: Ընդգծումը մերն է - Ա. Ա.:

գործում ու ստեղծագործում էին և վայելում Հոռմի անվերապահ հովանավորությունը, և դժվար, կարելի է ասել՝ գրեթե անհնարին էր դեմ գնալ ընդհանուր հոսանքին, եթե չասենք, որ նաև անվտանգ չէր:

Մ. Սեբաստացու քերականության մեջ լատինատիպ մտածողության ազդեցության առկայությունը, սակայն, միայն նշվածով չի բացատրվում: Էդ. Աղայանը դրան զուգընթաց հիշում է նաև մի երկրորդ պատճառ: Նրա կարծիքով՝ «Որ Մխիթար Արքայի գրքում նկատվում է ժամանակի քերականությունների ազդեցությունը, դա ճիշտ է, և այդպես էլ անշուշտ պետք է լիներ, սակայն ընտիր և ոչ ընտիր, հարազատ և ոչ հարազատ գրաբարյան ձևերը չտարբերելու համար ոչ միայն այդ ազդեցությունը պետք է ճշել, այլև այն, որ իր ժամանակ այդ ձևերի հարազատությունը դեռ հնարավոր էլ չէր պարզել. հայտնաբերված և ուսումնասիրված ձեռագրերի սակավությունը դեռևս այդ բանը պարզելու համար քիչ նյութ էր մատակարարում»²:

Այս երկու պատճառներից Գ. Զահուկյանը հավելում է նաև մի երրորդ պատճառ: «Մխիթարը /Սեբաստացին - Ա. Ա./ - գրում է նա, - շարունակում էր մնալ ուսցիոնալիստական քերականության դիրքերի վրա, որ խանգարում էր լեզվի բուն ձևերի ուսումնասիրությանը»³:

Սրանով հանդերձ՝ նրա քերականությունը նշանակալից երևույթ էր հայ քերականագիտության պատմության մեջ և որոշակի առաջընթաց քայլ գրաբարի ուսումնասիրության ասպարեզում: Սեբաստացու քերականության պատմական արժեքը մեծանում է նաև նրանով, որ նրա հիման վրա կազմվեց վրացերենի առաջին քերականությունը:

1759 թ. վրաց Ամտոնի կաթողիկոսը Մխիթար Արքայի աշխատության հետևողությամբ շարադրեց վրացերենի քերականությունը՝ արդեն *ոչ թե լատինաբան*, կամ ավելի ճիշտ՝ *ոչ այնքան լատինաբան, որքան հայկաբան* ձևեր մոծելով վրացերենի մեջ: Այս փաստը վկայում են նաև վրաց աղբյուրները:

«Դուռն քերականութեան Աշխարհաբար լեզուին հայոց» աշխատության առաջին մասում, որ շարադրված է թուրքերեն և հասցեագրված մայրենին չիմացող թուրքախոս հայերին, Սեբաստացին քննել է արևմտահայերենի անվան և դերանվան հոլովները:

Հեղինակը երկու խոսքի մասերին էլ հատկացրել է գրաբարում և միջին հայերենում ավանդաբար ընդունված վեց հոլովները՝ *ուղղականը, սեռականը, տրականը, հայցականը, բացառականը և գործիականը*:

Արևմտահայերենը, իր ձևավորման վաղ շրջանից սկսած, ներգոյականի համար հատուկ ձև չի ունեցել, ուստի և այդ հոլովը չի արտացոլվել հոլովական համակարգի մեջ:

Իր աշխատության առաջին հատվածում Սեբաստացին հետապնդել է զուտ գործնական նպատակներ, տեսական հարցեր չի շոշափել: Ներկայացրել է հոլովման և խոնարհման առավել կարևոր յուրահատկությունները: Սեբաստացու պատկերած աշխարհաբարի հոլովական համակարգն այնքան էլ ամբերի չէ: Տակավին մշակված չեն հոլովների ձևավորման ու տարբերակման հստակ սկզբունքները, սահմանազատված չեն հիմքակազմիչ և հոլովակազմիչ տարրերը, հակասություններ կան որոշ հոլովների եզակիի և հոգնակիի

² Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. Ա, Եր., 1958, էջ 124:

³ Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 210, Ընդգծումը մերն է - Ա. Ա.:

ձևակազմության միջև: Կան և ուրիշ կարգի պակասավոր արտահայտություններ: Նշենք մի քանի սկզբունքային այլ դիտարկումներ ևս:

1. Տրականը սեռականից տարբերակում է *ձ* հոդով /սեռ. *ազարակի, հաւի, ազարակներու, հաւերու, տր. ազարակին, հաւին, ազարակներուն, հաւերուն*/: Սա շատ կարեւոր սկզբունք է, որ հեղինակը կիրառել է հիշյալ երկու հոլովների տարբերակման համար: Այս սկզբունքը գիտականորեն ճիշտ է և արդարացված է արդյոք, դա այլ հարց է: Այժմ միայն ընդգծենք, որ այս սկզբունքը հետագայում ընդունվեց շատերի կողմից: Այն որդեգրեցին Ար. Ղարիբյանը, Գ. Սևակը, Աշ. Աբրահամյանը, Ալ. Մարգարյանը, Վ. Քոսյանը և ուրիշներ: Այսպիսով՝ Սեբաստացին հայ քերականագիտության մեջ առաջինն էր, որ *ձ/ը/* հոդին հատկացրեց լրացուցիչ գործառույթ՝ այն ընկալելով *ճան որպես հոլովակերտ տարր*:

2. Հոգնակի բացառականը կազմում է տրականի մեծ */տր. - ազարակներուն, -հաւերուն*, բաց. - *ազարակներուն, - հաւերուն*/:

Միջին հայերենում արդեն իսկ ձևավորված էր բացառականի է ձևությոն, որը կցվում էր կա՛մ ուղղականի բառաբանին, կա՛մ սեռական-տրականի բառաձևին /հմմտ. *մասէ, մահունէ* կամ *մահէ, տիրոջէ*/: Միջին հայերենում հոգնակի բացառականը կարող էր ճան ձևով մույնամալ հոգնակի սեռական-տրականի հետ: Այդ դեպքում տարբերակիչ ձևությոն դեր էր կատարում *ի/յ/* մակդիրը /հմմտ. սեռ. - տր. - *աղջկներու /ոյ/, գիշերներու /ոյ/* և բաց. *յ/* աղջկներու /ոյ/, *ի/* գիշերներու /ոյ/:

Սեբաստացին միջինհայերենյան կազմությունները սովորույթի ուժով մոծում է մոր հայերենի մեջ, մինչդեռ այստեղ բացառականն այլևս չէր կարող ձևով մույնամալ սեռական-տրականի հետ՝ իր սեփական ձևակազմությունը՝ *է* և *ից* վերջավորություններն ունենալու պատճառով:

3. Հայցականը թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում անհոդ է: Մնում է անհասկանալի, թե այդ հոդը ի՞նչ դեր ունի. տարբերակում է հայցականը ուղղականի՞ց, ինչպես տրականը՝ սեռականից: Այդ դեպքում հոդը, ինչպես տրականի դեպքում, վերածվում է հոլովակերտ ձևությոն: Եթե սոսկ առկայացման կարգի ցուցիչ է, ապա ինչո՞ւ մույն ցուցիչը չունեն եզակի և հոգնակի ուղղական հոլովները: Երկու դեպքում էլ հարցերը մնում են անպատասխան և լուծման կարոտ:

4. *Ով* դերանվան եզակի տրականի համար տալիս է *ում* ձևը, իսկ սեռականի տեղը թողնում է թափուր /մշում է գծիկով՝ *-/*, այնինչ միջին հայերենում *ում* ձևը հաստատապես ձևավորվել էր ճան որպես սեռականի արտահայտություն: *Որ* դերանվան եզակի բացառականի տեղը մույնպես թափուր է թողնում, մինչդեռ *որմէ* ձևը վաղուց կար վկայված միջին հայերենի մատենագրության մեջ և չէր կարող անցած չլինել մոր հայերենին:

5. *Որ* դերանվան սեռականի և տրականի դիմաց դնում է *օրու* ձևը, փոխարեն՝ *որու*: *Օրու*-ն ակնհայտորեն բարբառային երանգ ունի:

Այս և մնան ձևերը վկայում են, որ Սեբաստացին դեռևս վերջնականապես չէր կողմնորոշվել համեմատաբար ընդհանուր տարածում ունեցող խոսակցական լեզվի, տարածական առավել մեծ ընդգրկում ունեցող բարբառների և մոր-մոր ձևավորվող ու քայլ առ քայլ գրական մշակման ենթարկվող աշխարհաբարի կառուցածների տակավին չհամակարգ-

ված խառն ու երերում երևույթների միջև: Այնուհանդերձ, մա մնում է առաջին հայ քերականը, որ հատուկ քննության օյոյթ դարձրեց աշխարհաբարի արևմտյան տարբերակի քերականությունը, ընդհանուր գծերով ճիշտ ներկայացրեց մրա հոլովման /մաև խոնարհման/ համակարգը, որը մասնակի բարեփոխումներով պահպանվում է մաև այսօր:

Ինչ վերաբերում է գրաբարին, հեղինակն այստեղ հետևել է լատինաբան դպրոցի մշակած տեսությանը և ճանաչել 10 հոլով՝ բացառությամբ դերանունների այն մասի, որոնք կոչական չեն ստանում: Վերջիններիս հատկացրել է 9 հոլով: Ստորև ներկայացնում ենք խաչ և ոմն բառերի եզակի և հոգնակի թվերի հոլովական հարացույցները՝ Սեբաստացու անվանակարգով և հերթականությամբ:

Եզակի

Անվանական / ուղղական - խաչ, ոմն

Սեռական - խաչի, ուրումն

Տրական - խաչի, ի խաչ, ումեմն, առ ումեմն

Հայցական - զխաչ, զոմն

Բացառական - ի խաչէ, յումեմնէ

Գործիական - խաչիւ, ոմամբ

Պարտական - զխաչիւ, զոմամբ

Ներգոյական - ի խաչի, յումեմն

Կոչական - ո՛վ խաչ

Հոգնակի

խաչք, ոմանք

խաչից, ոմանց

ի խաչս, առ ոմանց

զխաչս, զոմանս

զխաչից, զոմանց

խաչիք, ոմամք

զխաչիք, զոմամք

ի խաչս, յոմանս

ո՛վ խաչք

Մ. Սեբաստացու հոլովական հարացույցի շարակարգը գրեթե մույնն է Հովհ. Կոստանդնուպոլսեցու /Հոլովի/ շարակարգի հետ. միայն ներգոյականի և պարտականի տեղերն են փոխված: Հովհ. Հոլովը ներգոյականը դնում է 8-րդ տեղում, Սեբաստացին՝ 9-րդ: Հոլովականության տարբերություններ չկան:

Սեբաստացին ևս հոլովները տարբերում է իմաստի և ձևի սերտ միասնության սկզբունքով և ավելի մանրամասն է բնութագրում հոլովները: Նա հատուկ ընդգծում է, որ հոլովները պետք է քննել մրանց արտահայտած նշանակությունների և ունեցած ձևակազմական հատկանիշների հաշվառմամբ: Հոլովը պետք է ունենա ձև, իսկ ձևը պետք է ունենա քերականական, տվյալ դեպքում՝ հոլովական իմաստ: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ մա գրում է. «Տասն կերպիս լինի շրջաբերումս միոյ և մոյնոյ անուան, ի հարկէ և նշանակութիւն նորին տասն կերպիս պէսպիսանայ»⁴:

Սեբաստացին ավելի հանգամանորեն է տվել հոլովների իմաստային բնութագրերը, քան Հովհ. Հոլովը, թեև մախորդի պես շեշտը դրել է հոլովական առավելապես հիմնական իմաստների մեկնության վրա: Նա ևս մախորդների պես ելակետ է ընդունում բառի ուղիղ ձևը՝ ուղղականը, և թեք հոլովները բնութագրում է ուղղականի ձևի և իմաստի հակադրությամբ: Այսպես. «Երկրորդ ասի *սեռական*, վասն զի անունս մինչ ուղղակի ոչ նշանակէ զէութիւն իրին, ըստ որում է էութիւն, այսինքն՝ ոչ նշանակէ *զմարդն* ըստ որում է

⁴ Մ. Սեբաստացի, Ջերականութիւն գրարարի լեզուի Հայկազան սնտի, Վենետիկ, 1730, էջ 243:

մարդ, այլ ըստ որում է ունող իրաց ինչ, ասի սեռական /.../: Վասն որոյ եթէ սեռական անունն այս մարդոյ ասիցի միայնակ, ո՛չ հանգուցանէ զմիտ մեր, այլ տայ որոնել և ասել զի՞նչն մարդոյ: Եւ յորժամ ասիցի լեզուն *մարդոյ* կամ ձեռն *մարդոյ* և այլն, յայն ժամ հանգչի ի միտ մեր: /.../ Երրորդն կոչի *տրական* վասն զի անունն մինչ ո՛չ նշանակէ անմիջապէս զէութիւնն իրին, ըստ որում է էութիւն, այլ ըստ որում է իմն ըղձալի կամ դիմելի և կամ միին իր ինչ տալի, ասի տրական⁵:

Մխիթար Աբբան ընդհանուր առմամբ դավանում էր լատինաբան քերականական դպրոցի սկզբունքները, բայց և շատ հարցերում խախտել է այդ դպրոցի ավանդույթները: Նրա «ավանդախախտությունը» ունի հետևյալ արտահայտությունները:

Ա. Թեև ընդունում է նախորդների կողմից գրաբարի մեջ մուծված *ը* և *ըն* նախամասնիկները՝ որպէս ներգոյական հոլովի ցուցիչներ, բայց և նեղացնում է դրանց կիրառության ոլորտը՝ ոճական արժեք տալով դրանց՝ «Բառնայ գհամեղութիւն շարադրութեանց»⁶:

Բ. Ինչպէս նշում է Գ. Զահուկյանը, «ներգոյականի *ուս*՝ *ու* վերջավորությունները գործածելի է համարում *ո*, *ո-ա* և *ու* հոլովումների համար, թեև նշում է, որ մոր քերականներից ոմանք դրանք կիրառում են նաև *ի* և *ի-ա* հոլովումների դեպքում՝ բայանձների հետ չչփոխելու համար: Ինքը փորձում է տալ մի այնպիսի ռացիոնալ միջոց, որ չխախտի հմերի գործածության կանոնները, այն է՝ առաջարկում է վերջավորությունները չփոխել, բայց տարբերել հաստատում շարադասությամբ»⁷:

Գ. Անձնամիջ հասարակ անունների ներգոյականը կազմում է 2 ձևով՝ բուն ներգոյականի պէս և նախդրիվ տրականով՝ *ի հօր* և *ի հայր*, *ի մօր* և *ի մայր*:

Դ. Նախադաս ածական որոշիչը ներգոյական հոլովով դրվելիս ստանում է անհրաժեշտ վերջավորություն, ինչպէս՝ *ի մեծի* Հոսմ և ոչ թե *ի մեծն* Հոսմ⁸:

Ե. *-ի* վերջնահնչյուն ունեցող որոշ բառերի /հոգի, որդի և այլն/ և *-ցի* ածանցով բաղադրված բառերի ներգոյականը կազմվում է *-ւով*, *ւոց* վերջավորություններով, փոխանակ *-եաւ*, *-եաց* ձևությոների⁹:

Դերանվան հոլովման հարցում Մխիթար Սեբաստացին մույնպէս հիմնականում ընդունում է Հովհ. Կոստանդնուպոլսեցու տեսությունը, բայց և որոշակի հստակություն մտցնում հոլովման տեսակների տարբերակման մեջ:

Նա ընդգծում է, որ՝

1) որոշ դերանունները հոլովվում են՝ սեռականում և տրականում լրիվ փոխելով հիմքերը.

Անուանական /ուղղ/ - ես, մեր, դու, դուք

Սեռական - իմ, մեր, քո, ձեր

Տրական - ինձ, մեզ, քեզ, ձեզ և այլն:

2) Որոշ դերանունների հիմքերը մասամբ են փոխվում, բայց և այնպէս անուններից տարբեր ձևերով են հոլովվում, ինչպէս՝

⁵ Նույն տեղում:

⁶ Նշվ. աշխ., էջ 248:

⁷ Գ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 220-221:

⁸ Մ. Սեբաստացի, Նշվ. աշխ., էջ 448:

⁹ Նույն տեղում: Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 320:

Անուանական – սա, դա, մա, այս, այդ

Մեռական – սորա, դորա, մորա, այսորիկ, այդորիկ և այլն:

3) Որոշ դերանունները հոլովվում են անունների պես՝ ստանալով մույն վերջավորությունները, ինչպես՝

Անուանական – իմ, քոյ

Մեռական – իմոյ, քոյոյ և այլն:

Մխիթար Սեբաստացու լեզվաբանական ժառանգությունը մեծապես նպաստեց հայ քերականական մտքի զարգացմանը: Նրա «Դիտմն քերականութեան աշխարհաբար լեզւին հայոց» աշխատությունն արևմտահայ աշխարհաբարի առաջին քերականությունն էր, իսկ «Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազան սեփի» աշխատությունը համրագումարն էր մինչ այդ եղած բառարանագրական նվաճումների: Չի կարելի չհամաձայնել Հր. Աղայանի այն բնութագրին, թե «Մխիթար Սեբաստացին իրեն նախորդող ամբողջ շրջանի գազարթն է հանդիսանում, իր քերականություններով ու հատկապես բառարանով մա մի կողմից փակում է հին շրջանը՝ իհարկե, ունենալով դեռևս այդ շրջանի որոշ հատկանիշներ /.../, մյուս կողմից բացում է մի նոր շրջան՝ գիտական լեզվաբանության երախայրիքի շրջանը»¹⁰:

¹⁰ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 131: